



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2016թ. հուլիսի 29

N 94 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 151-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլանի 9.1.1 կետի պահանջները.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. 2016 թվականի սեպտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով:
2. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչությանը,

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին,

3) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարահանման հանձնաժողովին,

4) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկներին,

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Հիդրոօդերևույթաբանական և մոնիթորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Աշտարակի օդերևույթաբանական կայանին,

6) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի «Հիդրոօդերևույթաբանական և մոնիթորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Քասախ-Սևջուր գետավազանի հիդրոլոգիական կայանին,

7) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ ըստ համաձայնության:

3. Սահմանել որ՝

1) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալը,

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետը:

4. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հրամանատարաշտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 2 հավելվածի:

5. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված պաշտոնատար անձանց, նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի,

2) մինչև 2016 թվականի սեպտեմբերի 22-ը զեկուցել ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին:

6. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

- 1) ապահովել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2016 թվականի օգոստոսի 26-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի հաստատմանը,
- 2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի,
- 3) ուսումնավարժության անցկացումից հետո՝ եռօրյա ժամկետում, ուսումնավարժության անցկացման վերաբերյալ ամփոփագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի հաստատմանը:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

- 1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,
- 2) ճշգրտել համատասխան պլանները,
- 3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին,
- 4) ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների վերաբերյալ զեկուցագրերը ներկայացնել ուսումնավարժության ղեկավարման շտաբին:

8. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Գ.ԳՅՈՂԱԼՅԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Ա.Ամիրջանյան:
2. Խաղարկման խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ-պետի տեղակալ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Հ.Դարբինյան:
Խաղարկման խմբի անդամներ՝
 - 1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության մայր Ա.Ստեփանյան,
 - 2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության կապիտան Վ.Հարությունյան,
 - 3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ

հերթափոխի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության ավագ լեյտենանտ
Հ.Մուրադյան:

3. Վերլուծության նախապատրաստման խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ-պետի տեղակալ, փրկարարական ծառայության մայոր Դ.Պետրոսյան:

Վերլուծության նախապատրաստման խմբի անդամներ՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Ա.Հակոբյան,

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ, փրկարարական ծառայության լեյտենանտ Գ.Ավագյան,

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Ս.Խաչատրյան,

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Սարգսյան:

4. Գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի հրշեջ փրկարարական ջրկատի հրամանատար, փրկարարական ծառայության փոխգնդապետ Հ.Հակոբյան:

Գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամներ՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի հրշեջ փրկարարական ջրկատի հրամանատարի տեղակալ, փրկարարական ծառայության կապիտան Ա.Շամիրյան,

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի հրշեջ փրկարարական ջոկատի երկրորդ խմբի պետ, փրկարարական ծառայության ավագ լեյտենանտ Հ.Գյուրունյան:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու	Նշումներ
1	2	3	4	5
1. Կազմակերպչական միջոցառումներ				
1	Ելակետային տվյալների որոշում ուսումնավարժության մտահղացման մշակման համար:	մինչև 02.08.2016թ.	Ռիսումնավարժության ղեկավար	
2	Խորհրդակցություն ուսումնավարժության նախապատրաստման ուղղությամբ:	մինչև 04.08.2016թ.	Ռիսումնավարժության ղեկավարի տեղակալ	
2. Ուսումնավարժության փաստաթղթերի մշակում				
1	Ուսումնավարժության մտահղացման մշակում:	մինչև 09.08.2016թ.	Ռիսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
2	Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում:	մինչև 16.08.2016թ.	Ռիսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
3	Իրավիճակի զարգացման պլանի մշակում:	մինչև 19.08.2016թ.	Ռիսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	

4	Գործնական միջոցառումների պլանի մշակում:	մինչև 23.08.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
5	Ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում:	մինչև 24.08.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
6	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում:	մինչև 26.08.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
3. Ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստում				
1	Ուսումնավարժության փաստաթղթերի ծանոթացում մասնակիցներին:	մինչև 31.08.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
2	Ուսումնավարժության փաստաթղթերի առաքում մասնակիցներին:	մինչև 05.09.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
3	Արձագանքող ուժերի հետ «Փլուզումների գոտիներում որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում» թեմայով վարժանքների անցկացում:	մինչև 12.09.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
4	Արձագանքող ուժերի անձնակազմին անվտանգության կանոնների հետ ծանոթացում:	մինչև 13.09.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	
5	Ղեկավար կազմի հետ «ՀՀ Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան»-ի 3-րդ հավելվածի՝ «Ուժեղ երկրաշարժի դեպքում Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի և «ՀՀ Արագածոտնի մարզի բնակչության	մինչև 19.09.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	

	տարահանման պլան>>-ի ուսումնասիրում:			
6	Ջեկույց ուսումնավարժության ղեկավարին ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին:	մինչև 22.09.2016թ.	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ